Վ. ԲՐՅՈՒՍՈՎԻ ԱՆՎԱՆ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

ՀԵՐԹԱԿԱՆ ԱՏԵՍԱՏՎՈՐՄԱՆ ԵՆԹԱԿԱՆ ՈՒՍՈՒՑԻՉՆԵԻ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՀԵՏԱԶՈՏԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔ

ԹԵՄԱ՝ Սովորողների մեջ արժեքային համակարգի ձևավորումը առարկայի դասավանդման ընթացքում

Աշխատանքի ղեկավարներ՝ Լ. Սաֆարյան, Ռ. Կարապետյան

ՈՒսուցչուհի՝ Ն. Պողոսյան

Դպրոց՝ Աղձքի միջն. դպրոց

Երևան 2022

Բովանդակություն

1. Ներածություն----------3

2. Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները---------- 5

3. Օտար լեզվի դերը որպես արժեհամակարգի լիարժեքության ձևավորման միջոց ---7

4. Արժեհամակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ----------10

5. Արժեքը որպես էթնիկական նորմ----------16

6.Եզրակացություն----------21

7. Գրականության ցանկ----------26

Ներածություն

«Արժեհամակարգ» հասկացությունը մանկավարժական գիտության մեջ ըմբռնվում է բավական լայն շառավիղով: Առավել ընդունված է այն ընկալումը, որ արժեհամակարգը մարդու բարոյական, գեղագիտական, հոգևոր, իմացական, մշակութային և էթնիկական արժեքների համախումբն է, որն անհրաժեշտ է անձի ներդաշնակ, բազմակողմանի ձևավորման և զարգացման համար: Արժեքների թվարկված համախմբերից որևէ մեկին գերապատվություն տալը կնշանակեր ոչ մանկավարժական մոտեցում խնդրին. Արժեհամակարգը լիակատար է և համեմատաբար ավարտուն բոլոր ներառված համախմբերի ներդաշնակ փոխլրացման պայմաններում: Ահա թե ինչու «արժեհամակարգ» հասկացությունը նաև զուրկ է խիստ որոշակի ստուգությունից: Արժեհամակարգի ձևավորման և նրա հարաբերական կայունության ապահովման համար հանրակրթության բնագավառում կարևոր և անփոխարինելի նշանակություն ունեն բոլոր ուսումնական առարկաները, որոնք թվում, այնուամենայնիվ, արժեքների ձևավորման առումով չափազանց մեծ է հումանիտար ոլորտի ուսումնական առարկաների դերը: Մասնավորապես՝ անգնահատելի է լեզվի և գրականության դերը՝ առանց նույնիսկ էականորեն տարբաժանելու մայրենի և **օտար լեզուների** նշանակությունը սույն խնդրի առնչությամբ:

Խնդիրներ

Արժեհամակարգի մեջ կուտակված է անցյալի փորձը, որի յուրացումը աշակերտների մեջ ձևավորում է հայրենասիրության, սեփական ժողովրդի պատմության, նրա ստեղծած մշակութային արժեքների, գիտական նվաճումների համար հպարտության զգացում: Իսկ ակտիվ ճանաչողական գործունեության պայմաններում ձևավորված գիտելիքները աշակերտների մոտ վերածվում են համոզմունքների և կարողությունների: Այսօր աճող սերնդի դաստիարակության գործն ընթանում է տարբեր հանգամանքների ազդեցության ներքո՝ ժողովրդագրական, ազգային, մշակութային, ընտանեկան, կրթական, հասարակական, սոցիալական և այլն: Հաշվի առնելով բազմաթիվ այս և այլ հանգամանքներ՝ ժամանակակից մանկավարժության համար խնդիր է դառնում

սովորողների ազգային գիտակցության ձևավորումը սեփական ժողովրդի պատմության ու մշակույթի հենքի վրա՝ չանտեսելով համամարդկային արժեքները: Կրելով վերոնշյալ և այլ հանգամանքների ներգործությունը, ընտրությամբ յուրացնելով դրանց ազդեցությունը՝ աշակերտը հաղորդակցվում է հասարակական մշակույթին և ձևավորվում իբրև ստեղծագործական անհատականություն:

Նպատակը

Կրթական տարբեր աստիճաններում աշակերտի մոտ ձևավորել աշխարհի նկատմամբ վերաբերմունքի տարբեր դրսևորումներ և հարաբերություններ: Վերաբերմունքն աշխարհի նկատմամբ և հարաբերությունը աշխարհի հետ, վերաբերմունք սեփական անձի նկատմամբ և հարաբերությունն ինքն իր հետ իրականացվում են հասարակական դաստիարակության համակարգի (ուսումնական հաստատություններ, հասարակական, պետական, խորհրդակցական մարմիններ, մանկապատանեկան կառույցներ, այլ) և տեղեկատվական տեխնոլոգիաների (հեռուստատեսություն, համացանցային լրատվական միջոցներ, մամուլ) միջոցով: Կինոն, թատրոնը, հեռուստատեսությունը, համացանցը ներգործում են աշակերտի անձի վրա ոչ միայն ինքնին՝ որպես տեղեկատվության աղբյուրներ, այլ նաև որոշակի տիպարների միջոցով, որոնք դրսևորվում են այդ «տեղեկատվական աղբյուրներից հոսող» հերոսների վարքագծում:

2. Սովորողի արժեհամակարգի վրա ազդող գործոնները

Աշակերտները, իրենց տարիքային, սեռական և անհատական առանձնահատկություններին համապատասխան, հակված են նույնացնել իրենց այս կամ այն հերոսի հետ՝ յուրացնելով նրանց վարքի ձևերը, ապրելակերպը, հագուստը, կենցաղը, կյանքի ոճը և այլն: Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող գործոններից են ավանդական միջոցները, այսինքն՝ աշակերտի մեջ աշխարհի նկատմամբ վերաբերմունքի և հասարակության հետ հարաբերության, սեփական անձի նկատմամբ վերաբերմունքի ձևավորումը ընտանիքի և սոցիալական միջավայրի միջոցով: Սակայն սովորողների կողմից այդ միջավայրին բնորոշ արժեքների, կանոնների, չափանիշների, հայացքների յուրացումը միշտ չէ, որ համապատասխանում է հասարակության կողմից ընդունված արժեքներին և խրախուսելի չափանիշներին: Ավանդական միջոցների յուրացումը լինում է չգիտակցված՝ վարքի ընդունված կաղապարներն ընդօրինակելու միջոցով: Այս առումով իրավացի **է Մ. Մոնտենը. «…Մենք որքան ասես կարող ենք պնդել մերը, սակայն սովորույթն ու համընդհանուր կանոնները մեզ քարշ են տալիս իրենց ետևից»:** [1]Աշակերտի արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը տարիքայինն է, երբ սովորողի արժեքային կողմնորոշումները, արժեքային նախապատվությունները, վարքն ու բարոյահոգեբանական գծերը դրսևորվում են՝ ըստ տարիքային և կազմաբնախոսական առանձնահատկությունների: Արտաքուստ արժեհամակարգային դաստիարակության առանցքը դրսևորվում է աշակերտի վարքի ու շփման հարաբերությունների որոշակի մակարդակում՝ խոսքում, արտաքին տեսքում, ազատ ժամանակն անցկացնելու ձևում, ապրելակերպում և այլն: Տարիքային դաստիարակությանը բնորոշ են հակումը դեպի մշակույթի որոշակի շերտերը, կենցաղին բնորոշ արժեքների որոշակի աստիճանակարգությունը: Սակայն այստեղ ամենակարևորը մանկավարժների կողմից «աշակերտների մեջ կյանքի նկատմամբ դրական վերաբերմունքի, ապրած յուրաքանչյուր օրվա համար ուրախության զգացում ապրելու ունակության ձևավորումն է» Սովորողի անձի

[1] **Մոնտեն «Փորձեր» 2016 էջ 26**

արժեքների ձևավորման վրա ազդող մյուս գործոնը միջանձնային հարաբերություններն են կամ իրենց համար հեղինակավոր, երևելի մարդկանց հետ շփումները (ծնողներ, ուսուցիչներ, մեծահասակներ, ընկերներ և այլն):

Բնական է, որ այդ հեղինակավոր անձինք կարող են լինել նաև աշակերտի վրա ներգործող հասարակական այս կամ այն կազմակերպությունների անդամները, դպրոցի տնօրենը, դասղեկը, ուսուցիչը և այլն:

Աշակերտը նրանցից կարող է ստանալ արժեքների վերաբերյալ ինչպես դրական մոդելներ, այդպես նաև բացասական: Ընդսմին՝ բացասական մոդելները հակում ունեն ձևավորվելու ավելի արագ և անդառնալի բացասական ազդեցություն կարող են ունենալ սովորողի անձի արժեքային ճիշտ դաստիարակության վրա: Հետևաբար արժեքների դաստիարակության այս բնագավառը պահանջում է մանկավարժական խստագույն վերահսկողություն և ըստ հարկի՝ նաև միջամտություն: Աշակերտի արժեքների ձևավորման խնդիրները բնականաբար լուծվում են ոչ միայն ընտանիքում, ուսումնական հաստատություններում՝ ուսումնադաստիարակչական գործընթացի միջոցով: Ուսուցման դաստիարակչական ներգործությունը օբյեկտիվ օրինաչափություն է, որովհետև աշակերտների համար ուսուցումը գործունեության հիմնական տեսակն է, դրա համար էլ այն կարևոր դեր է կատարում նրանց անձի ձևավորման գործում: Ուսուցման գործընթացի դաստիարակչական ներգործության հարուստ աղբյուր է բուն գործընթացի բովանդակությունը, որովհետև ընտրելով դաստիարակչական առումով հիմնական գաղափարները, օրենքները և հասկացությունները՝ ուսուցիչը հնարավորություն է ստանում առարկայական ծրագրերի բովանդակության յուրացման միջոցով աշակերտների մեջ սերմանել քաղաքական, իրավական, բարոյական, գեղագիտական, բնապահպանական և այլ գիտելիքներ ու վերաբերմունք: Կրթության բովանդակության հետ միասին ուսուցման մեթոդները ներգործում են աշակերտների ճանաչողական ունակությունների վրա՝ նրանց հնարավորություն տալով ստացած գիտելիքները կյանքում օգտագործելու ըստ նպատակի:

3.Օտար լեզվի դերը որպես արժեհամակարգի լիարժեքության ձևավորման միջոց

Սովորողների անձի արժեքների ձևավորման առումով հանրակրթության մեջ ուրույն նշանակություն ունեն ուսուցանվող օտար լեզուները, որով ստեղծված համաշխարհային նշանակության գրական կոթողներն ունեն սերունդ կրթելու և մարդկային հատկանիշներով նրանց դաստիարակելու հսկայական ներուժ: Ահա թե ինչու հանրակրթական դպրոցում գերմաներեն դասավանդումը դուրս է գալիս սոսկ օտար լեզու և օտար մշակույթ ուսուցանելու նեղ շրջանակից և վերածվում է սովորողների գեղագիտական, բարոյական, հոգևոր արժեհամակարգը ձևավորելու մի միջոցի, որի դերը չպետք է թերագնահատել: Գերմաներենի անհամբելի հարստությունները փռելով սովորողների առջև՝ անուղղակիորեն նրանց դաստիարակում ենք այլոց հոգևոր արժեքները ճանաչելու և գնահատելու բարոյական պատրաստակամությամբ, իսկ գերմանական գրականության մարգարիտները հարստացնում են սովորողների հոգևոր պաշարները և հղկում գեղագիտական ճաշակը, ինչը էական նշանակություն ունի նրանց արժեհամակարգի լիարժեքության և ընդգրկունության առումով: Իբրև գերմաներենի ուսուցչուհի՝ սեփական փորձով կարող եմ հավաստել, որ աշակերտի արժեհամակարգը պետք է ձևավորել ներդաշնակության սկզբունքով, որում իր ուրույն տեղը պետք է ունենա հնարավորինս սերտ հաղորդակցումը օտար մշակույթին և լեզվին՝ որպես մշակույթի մի տարատեսակի: Արժեքների բուրգի գագաթին գտնվող նվիրական ու մեծագույն արժեքի՝ հայրենասիրության զգացումը դաստիարակելու համար : Հայրենասիրությունն այն մեծագույն արժեքն է, որ հարգանք ու պատկառանք է հարուցում, նույնիսկ երբ դրսևորվում է հակառակորդի կամ թշնամու մոտ: Ուսուցչի քաղաքացիական դիրքորոշումը, ձգտումը՝ դաստիարակել բարձր արժեքներ կրող քաղաքացիներ, նրա մտահորիզոնը, հասարակական լայնախոհությունը, սերը երեխաների նկատմամբ ուսումնական գործընթացի արժեքային դաստիարակչական ներգործության բարձրացման կարևոր պայմաններից են: Ընդ որում՝ դաստիարակչական խնդիրների լուծումը պայմանավորված է նաև նրանով, որ ուսուցիչը համագործակցային փոխհարաբերությունների միջոցով նախատեսում է աշակերտների ոչ միայն մտավոր, այլև բարոյական, գեղագիտական ու ֆիզիկական

դաստիարակության խնդիրների նկատմամբ համակողմանի մոտեցում: Ուսուցման գործընթացում լուծվում են սովորողների կրթական, դաստիարակչական կամ արժեքային և ընդհանուր զարգացման խնդիրները: Դրա համար յուրաքանչյուր դասի դաստիարակչական խնդիրների լուծումը նախատեսում է ոչ թե մեկուսացված կամ առանձին մոտեցում, այլ գիտելիքների ու կարողությունների, արժեքային որակների, կամքի, բնավորության, զգացմունքների, հոգեբանական տարբեր դրսևորումների միաժամանակյա և փոխկապակցված մոտեցում: «**Եթե դուք ունակ եք որոշելու երեխայի ունակությունն ու նրա ուժը, դուք պետք է գիտենաք, որ ամենամեծ ուրախությունը՝ դժվարությունների հաղթահարման, նպատակին հասնելու, գաղտնիքի բացահայտման ուրախությունը հաղթանակի բերկրանքն է ու ինքնուրույն դառնալու, տիրելու ու տիրապետելու երջանկությունը»**– Յուրաքանչյուր դասի ժամանակ ուսուցիչը որոշակի դաստիարակչական խնդիրներ է լուծում՝ հաշվի առնելով տվյալ առարկայի և թեմայի ուսումնասիրման հիմնական խնդիրները, որոնք ներկայացված են առարկայական ծրագրերում: Նա առանձնացնում է ընդհանուր դաստիարակչական խնդիրները, որոնք առանձին աշակերտների մոտ հաճախակի են դրսևորվում: Ուսուցիչը ուսուցման կազմակերպման տարբեր ձևերի ընտրության միջոցով (անհատական, խմբային, էքսկուրսիա, դասղեկական ժամ, արտադասարանական միջոցառումներ և այլն) առավել արդյունավետ է դարձնում աշակերտների արժեհամակարգային դաստիարակչական խնդիրների լուծումը: Օրինակ՝ խմբային աշխատանքի ժամանակ աշակերտները սովորում են ուշադրությամբ վերաբերվել միմյանց, միասին հաղթահարել դժվարությունները, միասին ձեռք բերել հաջողություններ, լսել հակադիր կարծիքներ, ընդօրինակել միմյանց և այլն: Հասակակիցների խմբում աշակերտն ավելի ազատ է արտահայտում իր մտքերն ու դատողությունները, գործում է անկաշկանդ, ինչն էլ նպաստում է ուսուցման արդյունավետ կազմակերպմանը: Անհատական աշխատանքում դաստիարակվում է աշակերտների ինտելեկտուալ պատրաստականությունը դժվարությունները հաղթահարելու գործում, ձևավորվում են համառության, ինքնակազմակերպման և ինքնավերահսկման ընդունակություններ: **«Հատկապես դեռահասների առանձնահատուկ զգացմունքայնությունը, ինքնասիրությունը, որ հաճախ արտահայտում է նրանց ինքնահաստատման և հասուն երևալու ձգտումը,**

մանկավարժից պահանջում է անհրաժեշտ նրբանկատություն, հարգանք դեռահասի անձի նկատմամբ» Ելնելով վերոգրյալից՝ կարող ենք եզրահանգել, որ արժեքային համակարգի ձևավորումը ժամանակակից դպրոցի գերխնդիրն է և մշտապես պետք է լինի մանկավարժների ուշադրության կենտրոնում:

4.Արժեհամակարգի ձևավորումը որպես արդի մանկավարժության կարևոր պահանջ

Արդի մանկավարժության կարևոր պահանջներից է երեխաների արժեքային համակարգի ձևավորումը:Կրթության նպատակը անհատին ոչ միայն գիտելիքներով զինելն է,այլև նրա մեջ բարոյական որոշակի հատկանիշներ ձևավորելը:Արժեքային կրթությունը ի սկզբանե կրթության անքակտելի բաղադրիչն է եղել: Ինչպես ամբողջ աշխարհում,Հայաստանում էլ այսօր արժեքային կրթությունը հասարակությանը հուզող խնդիրներից մեկն է: Մեզանում արժեքային կրթության նկատմամբ ավանդաբար ընդունված է հետևյալ մոտեցումը.դպրոցն ու ծնողները փորձում են բարոյական ժառանգությունը փոխանցել նոր սերնդին՝նրանց մեջ լավ արժեքներ սերմանելով և հաստատելով բարոյական այլևայլ հատկանիշների ճշմարտացիությունը: Արժեքային կրթության նոր՝արևմտյան մանկավարժության մեջ մշակված մոտեցման հիմքում մտածական հմտությունների ձևավորման սկզբունքն է: Ըստ սրա՝ աշակերտներին պետք է օգնել իմաստավորելու որոշակի արժեքներ,այսինքն՝նրանց պետք է խրախուսել սեփական կենսափորձի և զանազան հարցադրումների միջոցով որոշել, թե իրենք ինչպիսի մարդ են ուզում դառնալ,ինչպիսի ավանդույթներ արժե պահպանել: Անշուշտ այս երկու մոտեցումներն էլ խոցելի կողմեր ունեն: Առաջինը երբեմն զուտ քարոզչական և ձևապաշտական բնույթ է ձեռք բերում. երեխաները լսում են,թե որքան լավ բան է ազնվությունը,արդարությունը,տարեցների նկատմամբ հոգատարությունը և այլն,սակայն կյանքում տեսնում են արժեքների խախտումն իրենց ուսուցիչների,ծնողների կամ շրջապատողների կողմից: Բնական է,որ այդ դեպքում դրանք վերացական արժեքներ են մնում և նրանց կերպարի մաս չեն դառնում:Մյուս կողմից էլ՝ նոր մոտեցումը շատ ազատական է, և վտանգ կա, որ անձնական ազատ ընտրության և բարոյական ընդունված արժեքների ու պարտավորությունների միջև նախապատվությունը կտրվի առաջինին: Ուստի երեխաների մեջ համապատասխան արժեքներ ձևավորելու համար շատ կարևոր է այս մոտեցումների խելամիտ միահյուսումը:Արժեքները երեխաներին ներկայացվում են առաջին հերթին գրական,պատմական հերոսների օրինակով,նաև ուսուցչի վարքագծով:Ուստի շատ կարևոր է առանձնահատուկ ուշադրություն դարձնել դասագրքերի նյութերին,ինչպես

նաև ներկայացված հերոսների վարքագծի վերլուծությանը և դրա միջոցով որոշակի արժեքների բացահայտմանը: Սակայն վերլուծությունը ենթադրում է առաջին հերթին երեխաների գործուն մասնակցություն,այսինքն՝ աշակերտները պետք է հնարավորություն ունենան ազատորեն արտահայտելու իրենց կարծիքը, զգացմունքները, որոշակի հարցադրումներ անելու, ընկերների հետ քննարկելու,դատողություններ անելու հերոսների վարքագծի մասին,գնահատելու և իրենց համար բացահայտելու այս կամ այն արժեքը:

Մյուս կարևոր սկզբունքն այն է,որ արժեքը պետք է սովորել ոչ թե լսելով,այլ կիրառելով: Ուստի պետք է նրանց հնարավորություն տալ կիրառելու իրենց սովորած արժեքը,այն ձեռք բերել իրենց իսկ փորձառության հիման վրա: Դրա համար,անշուշտ, պետք է ընտրել գործունեության այնպիսի ձևեր,որոնք համապատասխանում են երեխաների տարիքին: Շատ կարևոր է նաև խրախուսանքը:Խրախուսելով երեխային կարելի է ոգեշնչել, մղել որոշակի գործողությունների, ազդել նրա զգացմունքների վրա և այդպես նպաստել նրա մեջ որոշակի արժեքի ամրապնդմանը:

Օտար լեզվի ընթացքում դպրոցականների արժեքային կողմնորոշումների ձևավորման բաղադրատարրը բնութագրվում է լեզվակիր երկրի առանձնահատկություններով: Հետազոտվող հիմնախնդրի տեսանկյունից մենք դիտարկում ենք այն արժեքները,որոնք դրսևորվում են՝

- Լեզվի գործառույթներում,
- Դպրոցում օտար լեզվի ուսուցման նպատակներում:

Լեզվի հիմնական գործառույթներն են՝ հաղորդակցական, ճանաչողական, տեղեկատվական, ներազդման, նշանակողական, մտքերի ձևավորման ու արտահայտման և այլն: Հաղորդակցական գործառույթը ենթադրում է խոսքային հաղորդակցում: Օտար լեզվի ուսուցման համակարգում այս գործառույթի իրականացումը նշանակում է մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ այնպիսի արժեքների դիտարկում,որոնք արտահայտվում են փոխադարձ շփման, բարեկիրթ հաղորդակցման ընթացքում: Շփման ու

հաղորդակցման արժեքային կողմը բնութագրում է մարդու՝ այլոց հետ համակեցության, սոցիումում դրսևորվելու, մարդկանց հետ շփվելու պահանջմունքը: Այս պարագայում հատուկ նշանակություն են ձեռք բերում խոսքային հաղորդակցման մշակույթը, լեզվական միջոցներով զրուցակցի վրա ներգործելու ունակությունը: Հաղորդակցական կարողության դրսևորումն այն է, որ կրտսեր դպրոցականը կարողանում է լսել, ընկալել, բանավիճել, համարժեք վերաբերմունք արտահայտել և տրամաբանված խոսք կառուցել: **Շփման ու հաղորդակցման արժեքները վերաբերում են սոցիալական խմբին: Քաղաքավարությունն ու բարեկրթությունը՝ որպես արժեքային հասկացություններ, բնուա թագրում են անձի՝ շրջապատող մարդկանց նկատմամբ հարգալից հարաբերություններ ձևա վավորելու ձգտումը**:Այս հատկանիշը թույլ է տալիս դրանք ներառել բարոյական արժեքների խմբում: Քաղաքավարությունն ու բարեկիրթ վերաբերմունքը դրսևորվում են խոսքային հաղորդակցման մշակույթի, հարգալից դիմելաձևերի, արտահայտչամիջոցների, բառապաշարի գործածման միջոցով: Տեղեկատվական գործառույթի տեսանկյունից լեզուն դիտարկվում է որպես հաղորդման, մարդկության փորձի ու իմացության, գիտակցված գործունեության ընթացքում կուտակված գիտելիքների համակարգման ու լեզվական ձևակերպման միջոց: Այդ գործառույթը մեր կողմից ուսումնասիրվող գործընթացի բովանդակության մեջ բացահայտում է իմացական արժեքները: Գիտելիքը հասարակական փորձով ստուգված՝ իրականության տրամաբանական յուրացման արդյունքն է, որը համարժեք է մարդու գիտակցության մեջ այդ իրականության արտացոլմանը: Ազգային-մշակութային ավանդույթների պահպանման ու փոխանցման գործառույթն իրականացնում է ժամանակների միջև կապը, որը հնարավորություն է ընձեռում լեզվի մեջ պահպանել ազգային մշակույթը և փոխանցել սերնդեսերունդ: Այն դրսևորվում է սոցիալա կան, իմացական, գեղագիտական արժեքների ձևով: **Գեղեցիկը ըստ Ս. Ի. Օժեգովի, մարմնավորում է այն ամենը, ինչը գեղագիտական վայելք է պարգևում: Գեղագիտական օրենքներին համապատասխանությունը դրսևորվում է ներդաշնակության մեջ**. Լեզվում ներդաշնակությունն արտահայտվում է գրականության, հատկապես բանահյուսության մեջ: Շփման գործառույթը ենթադրում է համամարդկային մշակույթի յուրացում՝ հատկապես գեղարվեստական

ստեղծագործությունների թարգմանությունների միջոցով: Այն ընդլայնում է արժեքների սահմանները՝ սոցիալական հանուր մարդկության արժեքները, իմացական գիտելիքը որպես համամարդկային մշակույթի արտահայտություն, գեղագիտական գեղեցկությունն ու ներդաշնակությունը, խոսքի գեղագիտությունն ու մշակույթը՝ որպես արժեք: Հուզական գործառույթը կապված է հույզերի և զգացմունքների արտահայտման հետ: Հուզական ներգործության առավելագույն հնարավորություններով են օժտված գեղարվեստական կերպարները:Հուզական գործառույթը կարևոր դեր ունի նաև առօրյա շփումներում: Այն նպատակաուղղված է բարոյական՝ հուզական արձագանքը՝ որպես արժեք, և գեղագիտական գեղեցիկի զգացումը, որպես արժեք, արժեքներին հաղորդակցմանը: Հուզական զգայունակությունը, կարեկցանքը, ապրումակցումը, անձի; այլոց նկատմամբ կարեկցական վերաբերմունքի դրսևորումներ են: Ա պրումակցումը ենթադրում է անձի հուզական այնպիսի վիճակներ ու ապրումներ, որոնք նա տածում է դիմացինի նկատմամ՝՝ նրա հուզական հոգեվիճակի նույնականացման հիման վրա: Գթասրտությունն արտահայտվում է այլոց դժբախտության և խնդիրների նկատմամբ զգայուն վերաբերմունքի միջոցով: Կարեկցանքը անձի, այլոց զգացմունքների նկատմամբ համարժեք ապրումն է: Խոսքային ներգործության գործառույթը ենթադրում է որևէ մեկին որոշակի արարքի մղելու խնդրանք, հորդոր, հրաման, դրդում: Այսինքն՝ այն արտահայտում է խոսողի կամային վերաբերմունքը: Այս գործառույթը ենթադրում է, որ սոցիալական միջավայրը ընկալվում է որպես արժեք: Մտքերի ձևակերպման և արտահայտման գործառույթը նշանակում է, որ ցանկացած միտք հնչյունային թաղանթ և արտահայտություն է ստանում: Այս գործառույթի իրականացումը ենթադրում է իմացական մտածողությունը, մտքերը ձևակերպելու և արտահայտելու կարողությունը՝ որպես արժեք և գեղագիտական մտքերի գեղեցիկ և ներդաշնակ ձևակերպումը՝ որպես արժեք, արժեքներին հաղորդակցում:Անձի վարքում դրսևորվող՝ լեզվի կարգավորիչ գործառույթն արտահայտում է նախատեսվող գործողությունների հաջորդական իրականացումը, մարդկային փոխհարաբերությունների, կենցաղի և բարոյական հարաբերությունների կազմակերպումն ու կարգավորումը: Այն նպաստում է բարոյական արժեքների յուրացմանը: Դրանք հատկապես այն արժեքներն են, որոնք վերաբերում են այլ

մարդկանց նկատմամբ հարաբերություններին, բարեկիրթ հաղորդակցմանը, վարվելակերպին, հասարակության մեջ վարվելաձևին, խոսքի մշակույթին,իր խոսքի նկատմամբ պատասխանատու վերաբերմունքին: Լեզվի հիշյալ գործառույթների հաշվառումը և օտար լեզուների ուսուցման գործընթացում էապես կարևորվող արժեքների բացահայտումը դիտարկվում են լեզվական առարկաների ուսուցման նպատակների համատեքստում: Դրանք պետք է համապատասխանեն նաև ուսումնական առարկաների հիմնական գործառույթներին և արժեքային համակարգի ձևավորման գործում ունեցած նշանակությանը:

Ուսումնական առարկաների դասակարգումն ըստ գործառույթային առանձնահատկությունների դիտարկվել է Վ.Ս.Լեդնևի, Ի.Կ.Ժուրավլյովի, Ս.Ի. Մասլովի հետազոտություններում: Դրանց արդյունքները սահմանում են կրթական համակարգում լեզվական բնագավառի առարկաների հիմնական գործառույթները և դերը: Ըստ Վ.Ս.Լեդնևի՝ ուսումնական յուրաքանչյուր առարկա զարգացնում է աշակերտի անձի որևէ կողմը, հետևաբար ուսումնական առարկաների հուզական արժեքային բաղադրատարրի բովանդակությունը տարբեր է՝ ըստ դրանց դերի և գործառույթների: Այս տեսանկյունից հետազոտողների կողմից առաջարկվել են ուսումնական առարկաների դասակարգումներ՝ ըստ դրանց գործառույթների: **Մայրենի և օտար լեզուների ուսումնական առարկաներում, ըստ Վ.Ս.Լեդնևի, առանձնացվում են հաղորդակցման գեղագիտական կողմերը՝ ընթերցանության համար նախատեսված գեղարվեստական տեքստերի հիման վրա:Չնայած դասակարգման բազմաթիվ մոտեցումներին՝ հետազոտողները միասնական են այն հարցում,որ լեզուների բնագավառի առարկաներն իրականացնում են տարբեր գործառույթներ:Այսինքն՝ այդ առարկաներից յուրաքանչյուրը անձի արժեքային կողմնորոշումների ձևավորման տեսանկյունից ունի իր առանձնահատկությունները: Տարրական դպրոցում լեզուների ուսուցման կառուցվածքն ու բովանդակությունը միասնական են. Դա թույլ է տալիս եզրակացնել, որ լեզուների ուսուցումն այստեղ ինտեգրվող համակարգ է:** տարրական դպրոցում լեզուների բնագավառի ուսումնական առարկաներից յուրաքանչյուրն ունի մի քանի գործառույթ՝

- տվյալ լեզվի տեսական հիմունքների ուսումնասիրում,
- խոսքային գործունեության իրականացում,

- իրականության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորում՝ գեղարվեստական խոսքի միջոցով:

Այս գործառույթներից յուրաքանչյուրն ունի որոշակի արժեքային ներուժ, որը բացահայտում է սովորողների արժեքային կողմնորոշումների ձևավորման հիմնական ուղղությունները: Լեզվի տեսական հիմունքների ուսումնասիրման գործառույթի իրականացումն առաջին հերթին ուղղված է կրթության բովանդակության իմացական բաղադրատարրի յուրացմանը և հետևաբար բնութագրում է կրտսեր դպրոցականների իմացական արժեքների ձևավորման նշանակությունը: Լեզվական գործունեության իրականացման գործառույթը նպաստում է հաղորդակցական արժեքի ձևավորմանը, որն ընդգրկվում է սոցիալական արժեքների խմբում: Իրականության նկատմամբ գեղագիտական և բարոյական հարաբերությունների ձևավորման գործառույթն ուղղված է բարոյական և գեղագիտական արժեքների ձևավորմանը, ինչպես նաև անձի՝ շփման և հաղորդակցման սոցիալական արժեքների ձևավորմանը:Դպրոցական ուսուցման համակարգում ուսումնական առարկաների գործառույթները միավորվում են որոշակի նպատակներով: Քանի որ դպրոցում օտար լեզուների ուսուցումն իրականանում է չորս կոմպոտենտների միջոցով,ըստ լեզուների եվրոպական համակարգի դրանց նպատակները և՝ մանկավարժական,և՝ մեթոդական հետազոտություններում միասնաբար են ներկայացվում: Այդ հետազոտությունները նվիրված են լեզուների ուսուցման նպատակների վերլուծությանն ու հիմնավորմանը: Լեզուն յուրացնել նշանակում է ապահովել իմացություն հետևյալ ոլորտներում՝

1.լսել

2. կարդալ,

3.գրել

4.Խոսել հաղորդակցվել

Լեզվական իմացությունը ենթադրում է լեզվի համակարգի, քերականական նյութի տիրապետում: Ուսումնառության տարիներին երեխաներն արդեն գործնականում տիրապետում են լեզվին: Լեզվական իմացությունը նշանակում է տվյալ լեզվի

բառապաշարի, լեզվական և դարձվածքային միավորների իմացություն, բառակազմական ձևաբանական, շարահյուսական, ոճական, գրականագիտական գիտելիքների ձեռքբերում, լեզվի քերականության յուրացում: Հաղորդակցական իրազեկությունը ենթադրում է խոսքային գործունեության բոլոր տեսակների, հաղորդակցական մշակույթի տիրապետում: Ի հաստատումն մանկավարժական նման մոտեցման՝ վերջին տարիներին լեզուների ուսուցման նպատակներին նվիրված հետազոտություններում շեշտադրվում են կրտսեր դպրոցականների զարգացման խնդիրները՝ հատկապես մտավոր զարգացման, լեզվական մշակույթի բարձր մակարդակի, գեղագիտական ճաշակի ձևավորման և բարոյական կատարելագործման տեսանկյունից: խոսքային գործունեության հիմնական տեսակների ձևավորում,խոսքային հաղորդակցման մշակույթի դաստիարակում,որն ընկալվում է իբրև երեխաների հաղորդակցում սոցիալական արժեքներին: Մարդկային արժեքներին երեխայի հաղորդակցման հիմք են հանդիսանում բարոյագիտական առանձնահատուկ գիտելիքները և ուսուցման ողջ համակարգի դաստիարակչական – բարոյագիտական ուղղվածությունը:

5.Արժեքը որպես էթնիկական նորմ

Երեխաների կրթության մասին խոսելիս՝ մենք հաճախ օգտագործում ենք «արժեքներ» հասկացությունը: Բոլորս կարեւորում ենք արժեքների ձեւավորումը գալիք սերնդի մոտ եւ միգուցե այդ բառին ինչ-որ ենթագիտակցական իմաստ ենք հաղորդում: Փորձենք ձեւակերպել, թե ինչ է ի վերջո «արժեք» ասածը: Արժեքն երեւույթ է մեր կյանքում, որի դիմաց մենք գին ենք վճարել: Վճարի «արժույթը» կարող է տարբեր լինել՝ տվայտանքներ, հույզեր, այլ արժեքների զոհաբերություն, հարազատների, հայրենակիցների կամ նախնիների կորուստ, կորցրած հող, հայրենիք եւ այլն: Արժեքը հնարավոր չէ ստանալ հեշտությամբ, այն պետք է վերապրել, անցկացնել քո միջով, զգալ ու գիտակցել: Այդ ամենի դիմաց մենք ստանում ենք իմաստներ, քանի որ արժեքներն են իմաստավորում կյանքը: Առանց արժեքների կյանքը դատարկ է: Հեշտ, առանց կորուստների եւ հաղթահարումների

ապրելն երբեք չի երջանկացնում հենց այն պատճառով, որ չի բերում արժեքների ձեւավորման։

Արժեքների մեծ մասը սնվում է էթիկական նորմերից, ձեւավորվում է դրանց շնորհիվ։ Էթիկական նորմերը անհրաժեշտ են մարդկանց համակեցությունը ապահովելու համար՝ դրանք պարտադրում են հրաժարվել ցանկալիից հանուն ընդհանուր շահի։ Դրանք տարբեր են ոչ միայն տարբեր հասարակություններում, այլեւ անգամ հասարակության տարբեր շրջանակներում, նույն երկրի տարբեր տարածքներում։

Նորմերը տարբեր են քաղաքում եւ գյուղում։ Էթիկական նորմերը մեզ թելադրում են վարքագիծ, եւ որքան դրանք ավելի պահանջկոտ են, այնքան ավելի լուրջ արժեհամակարգ է պետք ձեւավորել, որպեսզի մարդը բնականորեն դրանց համապատասխանի։ Զարգացած մշակույթները ունեն զարգացած էթիկական նորմեր։ Երբ դրանք քայքայվում են, պահանջները նվազում են, առաջանում են արժեհամակարգային խնդիրներ։ Ահա թե ինչու առաջին հայացքից անվտանգ թվացող տարատեսակ «ազատությունները» իրենց հետ մեծ վտանգներ են բերում։ Հիմա անդրադառնանք բարոյականությանը։ Եթե էթիկական նորմերը ծառի արմատներն են, իսկ արժեքները՝ բույնը, ապա բարոյականությունը դրա սաղարթն է։ Բարոյական է այն ամենը, ինչը նպաստում է արժեքների պահպանմանը եւ չի հակասում դրանց։ Անբարոյական է ամենը, ինչը դեմ է արժեքներին եւ բերում է դրանց քայքայման։ Օրինակ, ցանկացած հասարակության մեջ անբարոյական է դավաճանությունը միայն այն պատճառով, որ այն արժեզրկում է խոստումը։ Եթե խոստումն արժեք չլինի, մարդկանց համակեցությունը կվերածվի մղձավանջի, քանի որ կվերանա փոխադարձ վստահությունը։ Հենց դրանով է վտանգավոր, օրինակ, կոռուպցիան, քանի որ այն դավաճանություն է հանրությանը տված խոստմանը։ Երբ փլուզվում են արժեքները, խախտվում է համակեցությունը եւ տարածվում անբարոյականությունը։ Մարդիկ դժբախտանում են, տնտեսությունն անկում է ապրում, հանցագործությունները դառնում են համատարած, կյանքը կորցնում է իմաստի զգալի մասը, մարդիկ սկսում են հեշտությամբ իրար կոտորել։ Հենց այս պատճառով է, որ կրթության հենքը եւ գլխավոր իմաստը պետք է դառնա արժեհամակարգի ձեւավորումը։ Դպրոցը պետք է լինի օրինակելի տարածք, ուր

հաստատուն են էթիկական նորմեր, ուր աշակերտները սովորում են դրանց համապատասխանել: Հաճախ դպրոցը ստիպված է պայքարել հանրության մեջ տարածված արատների դեմ եւ այդ պայքարում պարտավոր է հաղթել: Դպրոցում կյանքը չի կարող հեշտ լինել երեխայի համար՝ նա պետք է զգա ե՛ւ ցավ, ե՛ւ ուրախություն, ունենա թե դժվարություններ, թե հաղթանակներ: Դպրոցում աշակերտը պետք է ընկալի համակեցության նորմերի իմաստը եւ ընդունի դրանք: Այդ ամենի պտուղը կլինեն իրական արժեքները, այլ ոչ թե թելադրված, անգիր արած, բայց աշակերտի համար ոչինչ չնշանակող ճշմարտությունները: Եթե մենք կարողանանք կառուցել դպրոցներ, որոնք կձեւավորեն արժեքներ աճող սերնդի համար, կունենանք աշխարհի ամենալավ եւ ամենաիմաստալից կրթական համակարգը:Եվ ամենից հաճախ այդ սպառողը դեռահասն է, ով չունի կայացած արժեհամակարգ, սոցիալական վարքի կարգավորման մեխանիզմներ, առավել հակված է ընդօրինակելու շրջապատին: Դեռահասության տարիքում (մասնագետների մեծամասնության կարծիքով՝ 12-16 տարեկան) է ձևավորվում մարդու աշխարհընկալման, աշխարհայացքի և, առհասարակ, առաջնային արժեքների համակարգը: Այս շրջանում անչափահասը սկսում է ակտիվորեն վերաիմաստավորել իր նախկին մոտեցումները, փորձում է դուրս գալ ավագների ազդեցության ոլորտից, նրա համար ավելի կարևոր է դառնում շրջապատի կարծիքը, փորձում է հարմարվել նրանց կողմից ընդունելի նորմերին և հաստատվել տարեկիցների միջավայրում: Իսկ դեռահասը վաղվա արժեքների կրողն է, ուստի կարևոր է այսօր արդեն նրան ներարկել առողջ արժեքներ, ապագայի հասարակության համար պատրաստել հայրենասեր, քաղաքակիրթ քաղաքացիներ: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափությունների համատեքստում: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Վերլուծելով անձի իմաստային ոլորտի ձևավորման և զարգացման խնդիրը՝ Ա.Սեռին պնդում է, որ այդ գործընթացները արտացոլում են տարիքային և անձնային զարգացման ընդհանուր օրինաչափությունները: Դ.Լեոնտևը նշում է, որ յուրաքանչյուր անձի զարգացման գործընթաց բնութագրվում է սոցիալական հանրության արժեքների և դրանց

փոխակերպումների, այսինքն՝ անձնային արժեքների կերպափոխմամբ: Տվյալ խնդիրը ներկայացվել է հոգեբանության տարբեր դպրոցների և ուղղությունների ներկայացուցիչների կողմից: Անձն իր զարգացման ընթացքում ներգրավվում է տարբեր փոքր և մեծ խմբերի մեջ: Դրանցից յուրաքանչյուրի կյանքում մասնակցությունն անհատի մեջ ձևավորում է որոշակի բնորոշ գծեր: Նրա անձնային հատկությունները ձևավորվում և զարգանում են կախված որոշակի սոցիալական շերտին, ազգին, էթնիկ խմբին, մասնագիտական կատեգորիային, ընտանիքին և այլ խմբերին պատկանելությունից: Աշխարհի մասին պատկերացումները, բարոյական հայացքները և համոզմունքները, մտածելակերպը և աշխարհայացքը, հետաքրքրությունները, ձգտումները և արժեքները պայմանավորվում են խմբային գիտակցության առանձնահատկություններով, որում անձը ձևավորվում է և որում ընթանում է նրա առօրյա գործունեությունը : Փոքր սոցիալական խումբը ոչ միայն անձին առաջարկում է որոշակի արժեքներ, այլև ինչ-որ չափով ազդում է անձի վրա՝ ուղղորդելով նրան դեպի այդ արժեքները: Մի կողմից խումբը և դրա առանձին անդամներն են ազդեցություն գործում անձի վրա, մյուս կողմից՝ անձն ինքն է ազդեցություն գործում խմբի մյուս անդամների և ամբողջ խմբի վրա: Հարմարվելով, ինտեգրվելով և անհատականանալով խմբում՝ յուրաքանչյուր անձ, իր հերթին, ազդեցություն է ունենում խմբի, դրա արժեքների, արժեքային կողմնորոշումների և արժեքային դիրքորոշումների վրա: Անձի արժեքային համակարգի ձևավորման գործում տեղեկույթի ազդեցության կառուցակարգերն անհրաժեշտ է առավել հանգամանորեն վերլուծել առանձին ուսումնասիրությունների շրջանակներում: Այսպիսով, ըստ մասնագիտական գրականության վերլուծության արդյունքների, անձնային արժեքների մասին պատկերացումները կարելի է ներկայացնել հինգ խմբով. արժեքը՝ որպես պատկերացում, դիրքորոշում, արժեքը՝ որպես պահանջմունք կամ շարժառիթ, արժեքը՝ որպես իմաստ և որպես հասարակության կենսագործունեության արդյունք: Անձի արժեքային համակարգի ձևավորման և շարժընթացի խնդիրը ընդունված է դիտարկել որպես հոգեկան զարգացման ընդհանուր օրինաչափություն: Այն անմիջականորեն կապված է տարիքային զարգացման առանձնահատկությունների հետ: Այդ գործընթացում հատկապես կարևորվում է ներքնայնացման գործընթացը՝ որպես սոցիալական խմբի արժեքներից

անցում դեպի անձնային արժեքները։ Արժեքային համակարգի ձևավորման գործում անհրաժեշտ է հաշվի առնել ինչպես օբյեկտիվ, այնպես էլ սուբյեկտիվ մի շարք գործոններ, որոնց թվում են սոցիալական պայմանները, անձի սոցիալականացման բնութագրիչները, շարժառիթային ոլորտի առանձնահատկությունները և անձնային բնութագրիչները։

Եզրակացություն

Ժամանակակից հասարակությունն արմատական փոփոխությունների մի բարդ շրջան է անցնում: Դա անմիջականորեն ազդում է երիտասարդ սերնդի մտածելակերպի, գործելակերպի, հոգեբանության և արժեքային կողմնորոշումների վրա: Նա այդ գործընթացների մասնակիցն է, այդ արժեքների ժառանգորդն ու կրողը: Նրա առջև ծառանում է նոր ժամանակի պահանջներին համապատասխան վերափոխվելու, կարողությունները զարգացնելու և իրացնելու խնդիրը: Ներկայումս կրթությունը վերաճել է մի գործոնի, որը նպաստում է հասարակության մեջ մարդու դերի առավել արժևորմանը՝ զարգացնելով համակեցության, հանդուրժողականության, համագործակցության և արժեքային անհրաժեշտ որակներ: Կրթական միջավայրի և կրթության բովանդակության արդիականացման անհրաժեշտությունը պահանջում է ուսուցման ավանդական մոտեցումների և մեթոդների վերանայում, կրթության նկատմամբ պետական և հասարակական հոգածության արմատական բարելավում: Արժեքային համակարգի ձևավորումը կարևորվում է նաև այն պատճառով, որ որոշակի արժեքային համակարգի հենքի վրա կառուցված գործողությունները ճանաչելի են և հետևաբար ընդունելի, քանզի դրանք սկիզբ են առնում ազգային, համամարդկային համընդհանուր սկզբունքներից, նորմերից և օրենքներից: Այս տեսանկյունից դիտարկելիս կարևոր է անհատ-քաղաքացու արժեհամակարգի ձևավորումը: Կար պատվեր՝ ինչպիսի արժեքային համակարգ ենք ուզում ունենալ հանրակրթական դպրոցում: Կրթությունը մարդակենտրոն գործընթաց է, ազգի հիմքը կրթությունն է և ցանկացած լավ, բարի ու արժեքավոր բան, հենց կրթության միջոցով է, որ փոխանցվում է մարդկանց, տարածվում հասարակության մեջ, դաստիարակում մատաղ սերնդին: Եվ այդ ամենը կատարվում է հենց կրթության միջոցով ու կրթության ֆոնի վրա: Կրթության ողնաշարը, կրթության առանցքը արժեհամակարգն է: Այն հիմքերի հիմքն է: Կարծում ենք, որ ցանկացած մարդու համար արժեքային համակարգն այն է, ինչ այդ մարդն ինքն իր համար արժեք է համարում: Ճիշտ է, այսօր մենք մի քիչ շփոթված ենք, որովհետև աշխատանքը համարժեք չի գնահատվում: Բայց միևնույն է, մեզնից յուրաքանչյուրը իր աշխատանքը պետք է պատշաճ կատարի: Մանկավարժը,

ուսուցիչը պետք է սեփական օրինակով դաստիարակեն սանին, օրինակ ծառայեն, որովհետև օրինակի ուժը զորավոր է: Մեր էպոսի հերոսները այսօրվա տասնհինգ տարեկաններին էլ են ոգեշնչում: Ոչինչ, որ նրանք երբեմն ժամանակակից լինելու համար երևութական պատմուճաններ են հագնում, երբեմն աղավաղում են որոշ ազգային արժեքներ, երբեմն էլ աղավաղված հայերենով են խոսում: Նրանց զգալի մասը տառապում է օտարամոլությամբ: Երբ ներքին հարստություն ձեռք բերեն, նրանք կհասկանան իրենց սխալը, և դա անպայման կուղղվի: Այսօր նրանք մի քիչ մոլորված են, անցման շրջանի մոլորություն է. չէ՞ որ կյանքում շատ արմատական փոփոխություններ, ճամփաբաժաններ եղան, ու հիմա նրանցից յուրաքանչյուրը պիտի գտնի իր արահետը: Եվ բոլորը չէ, որ ի վիճակի են դա անել: Մենք նրանց պետք է ուղղորդելով, առաջնորդելով սովորեցնենք: Բարոյական վակուում չի լինում, եթե որոշ արժեքներ կորցրել ենք, փոխարենը ուրիշ արժեքներով պետք է դաստիարակենք, իսկ դա պետք է մենք անենք, մենք բոլորս համատեղ՝ ընտանիքը, մանկապարտեզը, դպրոցը, բուհը, բանակը: ՀՀ կառավարությունը հաստատեց «Հանրակրթության պետական կրթակարգ» և «Պետական կրթական չափորոշիչ» կոչվող նորմատիվային փաստաթղթերը, որոնցով ամրագրվեց «արժեքային համակարգ» բաղադրիչի մուտքը հանրակրթական դպրոց: 2006 թվականի սեպտեմբերի մեկից դրանք կյանքի կոչվեցին: Հասարակության և յուրաքանչյուր անհատի բարեկեցիկ կենսակերպի ձևավորման և ապահովման համար Հայաստանի Հանրապետության հանրակրթական դպրոցներում արժեքային որոշակի համակարգի առկայությունը կրթության բովանդակության անհրաժեշտ բաղադրիչներից մեկը դարձավ, որը սովորողներին պետք է փոխանցեր գիտելիքներ, կարողություն-հմտություններ, որոնք ուղղված լինեն ընդհանրական համակարգված արժեքային հիմքերի ձևավորմանը և դրանով՝ պետության, ազգի և անհատի ներդաշնակ փոխհարաբերության ապահովմանը: Կրթակարգով ամրագրվեց ապագա շրջանավարտի կատարելատիպը, որն ավելի շատ արժեքային համակարգի չափանիշներ էր պարունակում: Քսաներորդ դարավերջի և քսանմեկերորդ դարասկզբի քաղաքացին հասկանում էր, որ այն երկիրն է հավակնում ունենալ լավ կրթական համակարգ, որը ոչ միայն գիտելիքի փոխանցումը, կարողություն-հմտության ձևավորումն է ապահովում, այլև իսկապես պատասխան է տալիս

սովորողի արժեքային վերջնարդյունքների մասին բոլոր հիմնահարցերին: Դրանք էին՝

● լինի հայրենասեր, օրինապահ, ազնիվ, մարդասեր, պատասխանատվությամբ օժտված, նախաձեռնող ու հասարակական գործուն դիրքորոշում ունեցող քաղաքացի,

● դրսևորի փոխըմբռնում և կարողանա համագործակցել ինչպես տարեկիցների, այնպես էլ ծնողների, իրենից մեծերի ու փոքրերի հետ և այլն: Հանրակրթական դպրոցում ուսուցանվող ցանկացած ուսումնական բնագավառ սովորողի արժեհամակարգի ձևավորման գործընթացում որոշակի մասնաբաժին ունի: Ուզում եմ շեշտադրել «Օտար լեզուներ» ուսումնական բնագավառը, , որի արժեհամակարգի բաղադրիչներում առկա են համամարդկային, քրիստոնեական և այլ արժեքներ, որոնք կմնան թղթի վրա, քանի դեռ մենք՝ մանկավարժներս, չենք բացահայտում դրանց իրականացման ճիշտ մեխանիզմներն ու ուղիները: Հանրակրթական դպրոցի բոլոր աստիճաններում արժեքների համակարգի ձևավորումը օրենսդրական պահանջ է, մասնավորապես՝ «օտար լեզուներ» ուսումնական բնագավառի պահանջն է՝

●միջին դպրոցում սովորողը պետք է ծանոթ լինի և հարգանք դրսևորի տվյալ օտար լեզուն ներկայացնող ժողովրդի մշակույթի նկատմամբ,

●ավագ դպրոցում սովորողը պետք է գնահատի տվյալ օտար լեզուն կրող ժողովրդի արժեքներն ու ավանդույթները

Յուրաքանչյուր ուսուցչի առջև կանգնում է իր առարկայի ուսումնական դասընթացի նյութերով արժեքների համակարգի ձևավորման, սովորողների անձի դաստիարակության խիստ բարդ խնդիրը: Որպեսզի յուրաքանչյուր ուսումնական առարկա յուրաքանչյուր սովորողի համար անձնային նշանակություն ստանա, անհրաժեշտ է, որ դասի ընթացքում ստեղծվի ստեղծագործական, համագործակցության մթնոլորտ, խրախուսվի իմացական ցանկացած գործընթաց, խրախուսվի յուրաքանչյուր նախաձեռնություն, յուրաքանչյուր իմացական փորձ: Ներկայումս հասարակության սոցիալ-տնտեսական բարեփոխումների շրջանի

բացասական հետևանքներից մեկը սոցիալական և անհատական արժեքների համակարգում տեղի ունեցող որակական փոփոխություններն են: Արժեքային կողմնորոշումը մարդու համեմատաբար կայուն, ընտրովի վերաբերմունքն է նյութական և հոգևոր մի շարք արժեքների ու իդեալների նկատմամբ, որոնք դիտարկվում են որպես անհատի կենսագործունեության կարիքների բավարարմանն անհրաժեշտ առարկաներ, նպատակներ կամ միջոցներ: Արժեքային կողմնորոշումներում կարծես կուտակվում է մարդու անհատական զարգացման ընթացքում ձեռք բերված կյանքի փորձը, որը պայմանավորում է նրա փոխհարաբերությունն այլ մարդկանց հետ, այդ թվում՝ վերաբերմունքն իր նկատմամբ: Արժեքային կողմնորոշումն անհատի կառուցվածքի կարևորագույն բաղադրիչն է: Զարգացած արժեքային կողմնորոշումը անհատի հասունության նշան է, նրա սոցիալականության ցուցանիշը: Արժեքային կողմնորոշումներից է բխում նաև անհատի ապրելակերպը: Կյանքը սրընթաց առաջ է շարժվում: Գլոբալացման գործընթացը կրթության համակարգի առջև նոր մարտահրավերներ է առաջադրում: «Տեխնոգեն հասարակությունը և տեղեկատվական-հաղորդակցական տեխնոլոգիաների մուտքը նոր չափանիշներ են պահանջում, որոնք տարբերվում են երեկվա չափանիշներից: Ինչպիսի՞ն կլինի կրթությունը, ապագայի կրթությունը: Այսօր աշխարհը նոր կրթական մոդելներ է փնտրում: Ովքե՞ր կձևավորեն այն առանցքը, որով հնարավոր կլինի դիմագրավել ժամանակի փորձություններին» Ժամանակի հրամայականով այսօր նոր կրթակարգ ստեղծելու աշխատանքներ են տարվում: Արդեն պատրաստ է և քննարկման փուլում է «Ազգային կրթակարգի» նախագիծը, որում ամրագրված են քսանմեկերորդ դարի քաղաքացու արժեհամակարգի բաղադրիչները: Խնդիր, որին ուղղված են կրթության հիմնախնդիրներով շահագրգիռ բոլոր մասնագետների ջանքերը: Այդ փոփոխությունը, ըստ էության, ձևավորում է մեր ապագան: Դա կլինի մի նոր փաստաթուղթ, պայմանագիր՝ այսօրվա քաղաքացու և վաղվա քաղաքացու միջև: Այն կլինի սոցիալական պայմանագիր, կրթության բարեփոխման գործիք: Հայաստանի Հանրապետությունում գործող պետական չափորոշիչը թեև որոշակիորեն արտացոլում էր միջազգային փորձում առկա նմանատիպ փաստաթղթերի սկզբունքները, սակայն ուներ կառուցվածքային, սկզբունքային և բովանդակային մի

շարք բացթողումներ, որոնք խոչընդոտում էին հանրակրթության արդյունավետ կազմակերպումը: **Համաշխարհայնացման պայմաններում մենք անպայման պետք է հաշվի առնենք եվրոպական առանցքային կոմպետենցիաները՝ բայց միշտ հիշելով, որ չի կարելի ստեղծել «ամորֆ մարդ, գործարանային արդյունք», այլ՝ հայ մարդ, հայ քաղաքացի, որն ապրում է քսանմեկերորդ դարում: Կրթական տիեզերական դաշտի մեջ մենք պետք է կարողանանք մեր տեսակետը հաստատել:**

Գրականության ցանկ

1. Հանրակրթական դպրոցի տնօրենի ուղեցույց, Կրթակարգ, ԿԱԻ, Երևան, 2004թ:
2. Իլյինսկի Ի., Ռուսաստանի կրթության «արդիականացումը» համաշխարհային գլոբալացման համատեքստում, «Կրթությունը XXI դարում» գիտակրթական հան Սերգեյ Իվանովիչ Օժեգով - մարդ և բառարան 1964դեսԵրևան, 2014 թ:
3. Մանասյան Ն., Հանրակրթության արժեքային համակարգը, «Մանկավարժություն» գիտամեթոդական վերլուծական ամսագիր, 2004թ.,
4. Հանրակրթության առարկայական չափորոշչային վերջնարդյունքներրն օրինակելի ծրագրերը անգլ. գերմ. ֆրանս.
5. Զեյնալյան Ն. Ա., Անձնային արժեք հասկացությունն անձի տեսություններում, Երևան, 2017:
6. Մ. Մոնտեն «Փորձեր» 2016:
7. Սերգեյ Իվանովիչ Օժեգով - մարդ և բառարան 1964: